Հավելված 1
Հաստատված է
«Այ Դի Բանկ» ՓԲԸ վարչության
2023 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ N 325-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2023 թվականի նոյեմբերի 6-ից

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ «IDBUSINESS SHOPPY» ՓԱԹԵԹԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ		
1.	Հաճախորդ	ՀՀ ռեզիդենտ/ՀՀ ոչ ռեզիդենտ Իրավաբանական անձ կամ Անհատ ձեռնարկատեր
2.	Փաթեթի շրջանակներում տրամադրվող պրոդուկտներ	1) Վճարային քարտ Visa Business կամ Visa Platinum Business տեսակի, 2) Բանկային հաշիվ ՀՀ դրամ արժույթով, 3) Հեռավար բանկային ծառայություններ՝ IDBusiness Mobile և/կամ Բանկ-հաճախորդ համակարգ [1], 4) Քարտային հաշվին տրամադրվող օվերդրաֆտ:
3.	Փաթեթին միացման միանվագ սակագին	1) Visa Business վճարային քարտի տրամադրման դեպքում՝ միանվագ 10,000 ՀՀ դրամ, 2) Visa Platinum Business վճարային քարտի տրամադրման դեպքում՝ անվճար:
4.	Փաթեթի սպասարկման վճար	1) Visa Business վճարային քարտի տրամադրման դեպքում՝ տարեկան 10,000 ՀՀ դրամ, 2) Visa Platinum Business վճարային քարտի տրամադրման դեպքում՝ տարեկան 30,000 ՀՀ դրամ:
5.	Փաթեթի շրջանակներում վճարային քարտի տրամադրման և սպասարկման պայմաններ	1) Վճարային քարտի գործողության ողջ ժամկետում՝ անվճար, 2) Վճարային քարտի շտապ թողարկումը 1 բանկային օրվա ընթացքում իրականացվում է անվճար[2]: 3) Քարտային հաշվի լրացուցիչ քաղվածքի տրամադրում Բանկի տարածքում կամ էլ. հասցեի միջոցով՝ անվճար 4) Վճարային քարտերի սպասարկման մնացած պայմանները, որոնք նշված չեն սույն տեղեկատվական ամփոփագրում սահմանվում են համաձայն Visa Business և Visa Platinum Business քարտերի տեղեկատվական ամփոփագրերի:
6.	Փաթեթի շրջանակներում բանկային հաշվի բացման և սպասարկման պայմաններ	1) Բանկային հաշվի բացում՝ անվճար 2) Բանկային հաշվի լրացուցիչ քաղվածքի տրամադրում Բանկում կամ էլ. հասցեի միջոցով՝ անվճար 3) Բանկային հաշվի սպասարկման մնացած պայմանները, որոնք նշված չեն սույն տեղեկատվական ամփոփագրում սահմանվում են համաձայն Բանկային հաշիվների սպասարկման տեղեկատվական ամփոփագրերի:
7.	Փաթեթի շրջանակում օվերդրաֆտի տրամադրման և սպասարկման պայմաններ	Սահմանվում են համաձայն IDBusiness Shoppy օվերդրաֆտի տրամադրման պայմանների և սակագների տեղեկատվական ամփոփագրի:

Ընդհանուր դրույթներ

1. Փաթեթի միացման հիմք է հանդիսանում Հաճախորդի գրավոր համաձայնությունը՝ ստորագրությունը:
2. Փաթեթի գործողության ժամանակահատվածում Հաճախորդը իրավունք չունի հրաժարվելու Փաթեթի մեջ ներառված ծառայություններից, բացառությամբ օվերդրաֆտի պայմանագրի վաղաժամկետ դադարեցման:
3. Փաթեթի մեջ ներառվող ծառայությունները հաճախորդին տրամադրվում են միաժամանակ:
4. Փաթեթից հրաժարվելու դեպքում վճարված միջնորդավճարները վերադարձման ենթակա չեն:
5. Փաթեթից հրաժարվելու դեպքում, բանկային հաշվի սպասարկումն իրականացվում է համաձայն Բանկային հաշիվների, փոխանցումների և «Այ Դի բանկ» ՓԲԸ կողմից մատուցվող այլ ծառայությունների սակագների Տեղեկատվական ամփոփագրի, իսկ Վճարային քարտի սպասարկումը՝ համաձայն Visa Business և Visa Platinum Business վճարային քարտի տեղեկատվական ամփոփագրերի:

[1] Ընդ որում, եթե Հաճախորդը արդեն իսկ օգտվում է հեռահար բանկային ծառայություններից, ապա վերջիններս կարող են չներառվել փաթեթում:
[2] Ծառայությունը հասանելի է միայն Բանկի Վարդանանց մասնաճյուղում:

6. Փաթեթում ընդգրկված ծառայությունները հաճախորդին տրամադրվում են 1-2 աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ Օվերդրաֆտի, որը տրամադրում է Օվերդրաֆտի տեղեկատվական ամփոփագրով նախատեսված ժամկետներում:
7. Բանկային հաշիվների բացման, վարման և դրամարկղային սպասարկման վերաբերյալ կողմերի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Իրավաբանական անձանց և Անհատ ձեռնարկատերերի Բանկային հաշիվների բացման և սպասարկման կանոններով և համապատասխան պայմանագրով/համաձայնագրով:
8. Քարտի օգտագործման, պահպանման, փակման, վերաթողարկման, անվտանգության ապահովման, քարտով գործարքների բողոքարկման վերաբերյալ այլ դրույթները, որոնք սահմանված չեն սույն տեղեկատվական ամփոփագրում, սահմանված են Կանոններով, Բանկի կողմից վճարային քարտի թողարկման, տրամադրման և սպասարկման հետ կապված Բանկի և Քարտապանի միջև կնքվող պայմանագրով, ներքին իրավական ակտերով, և վճարահաշվարկային համակարգերի (ԱրՔա, Visa) կանոններով:
9. Բանկի մասնաճյուղերի և բանկոմատների ցանկին, վերջիններիս գործունեության հասցեներին և աշխատանքային ժամերին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ Մասնաճյուղեր և Բանկոմատներ:
10. Բանկի կողմից հեռավար սպասարկումն իրականացվում է IDBusiness Mobile հավելվածի և Բանկ-հաճախորդ (IDBusiness Online - https://online.idbank.am/) առցանց համակարգի միջոցով: Բանկի հեռավար սպասարկման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները ներկայացված են Հեռավար բանկային ծառայությունների մատուցման հրապարակային պայմաններում:
11. «IDBusiness Shoppy» փաթեթից օգտվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ հղումով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ